ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N230-Ա

« 27 » ՕԳՈՍՏՈՍԻ 2025Թ.

ԱՐՍԵՆ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐԻ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՂԱՎՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 92-րդ հոդվածով, 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37.1, 37.2 և 39–րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 4-ին կայացած նիստի թիվ 384 արձանագրությունը, 2023 թվականի նոյեմբերի 17-ի Աղավնի Մանուկյանի հետ կնքած N533 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «ա» ենթակետը և Արսեն Շահինյանի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Արսեն Դերենիկի Շահինյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով: Փորձաշրջանի ղեկավար նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Արփիի Վ. Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Հովսեփյանին: Աշխատանքը սկսել 2025 թվականի օգոստոսի 29-ից:

2. Աղավնի Մանուկյանին ազատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից: Աշխատանքի վերջին օրը համարել 2025 թվականի օգոստոսի 28-ը:

3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025թ. օգոստոսի -ի
N -Ա որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐԻ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Վահան Աբրահամյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական

Անդամներ՝

Գվիտոն Դավթյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունում փորձագետ
Մայիս Նազարյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող